2023 թ.

«ՍՊՈՐՏՈՒՍ» ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Որակի ապահովման բաժին

Ներածություն

2023–2024 ուսումնական տարում «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի» Որակի ապահովման բաժինն իրականացրել է անանուն հարցում «Սպորտուս» հենակետային քոլեջի ուսանողների շրջանում՝ գնահատելու բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները, պարզելու դասախոսական կազմից ուսանողների գոհունակության աստիճանը, ինչպես նաև բացահայտելու կրթական գործընթացում առկա խնդիրներն ու հավաքագրելու ուսումնառողների առաջարկները:

Հարցման նպատակն է ուսումնասիրել քոլեջում դասավանդման և ուսուցման մեթոդաբանությունը, աջակցել ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանն ու բարելավել կրթական միջավայրը:

Հարցման ընթացքում լրացվել է 490 հարցաթերթ (տե՛ս Աղյուսակ 1), որոնց միջոցով գնահատվել է քոլեջում դասավանդվող 14 դասընթացի 16 դասախոս: Դասախոսներին գնահատողների միջին քանակը 30 է, նվազագույնը՝ 12, իսկ առավելագույնը՝ 46:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է ուսումնառողների 60 %–ը: Աղյուսակ 1–ում պատկերված են ուսանողների մասնակցությունը քանակական ցուցանիշներն՝ ըստ դասախոսի:

Աղյուսակ 1

№	Առարկա	Ա.Ա.	Ընդհանուր ուսանողների թիվը	Մասնակիցների թիվը	%
1	Հայոց լեզու և գրակ.	Սիրանուշ Սաֆարյան	53	43	81,1
2		Մելինե Մանուկյան	55	43	78,2
3	Հայոց պատմություն	Արմենուհի Քոչարյան	77	43	56
4	Օտար լեզու	Աննա Սինանյան	55	31	56,4
5		Աշխեն Գրիգորյան	22	18	82
6	Ռուսաց լեզու	Էլմիրա Լիլոյան	46	34	74
7		Անահիտ Բարսեղյան	31	13	42
8	Հասարակագիտություն	Եղիա Յայլյան	77	46	58

9	Հանրահաշիվ և երկրաչափություն	Կարինե Կիրակոսյան	77	41	53,2
10	Կենսաբանություն	Լուսինե Խաչատրյան	53	24	45,3
11		Մելինե Հովհաննիսյան	24	12	50
12	Քիմիա	Կարինե Ղույյան	77	34	44,2
13	Աշխարհագրություն	Զելդա Հովհաննիսյան	77	33	43
14	Ինֆորմատիկա	Լիդա Մեծոյան	39	18	46
15		Մանյա Պողոսյան	38	14	37
16	ՆԶՊ	Հովսեփ Եսայան	77	37	48

Հարցմանը մասնակցվածության ավելի մեծ քանակ ապահովել հնարավոր չի եղել՝ պայմանավորված հարցում անցկացնելու նպատակով ուսանողների հետ կազմակերպված հանդիպումներին ուսանողության հաճախումներով և հարցմանը մասնակցելու դժկամությամբ: Քանի որ «Ֆիզկուլտուրա» առարկան դասավանդել է 12 դասախոս, ուսանողները դժվարություն են ունեցել մտաբերելու նրանցից յուրաքանչյուրին և հետևաբար չեն կարողացել անհատապես գնահատել նրանց դասավանդման փորձը:

1. Հարցման մեթոդաբանությունը

Հարցաթերթը

Հարցման հարցաթերթը մշակվել է ՈԱԲ–ի կողմից՝ բուհում և բուհից դուրս օգտագործվող նմանատիպ հարցաթերթերի, ինչպես նաև միջազգային կրթական հաստատություններում գործածվող հարցման օրինակների հիման վրա: Հարցման մշակման ընթացքում քննարկումներ են եղել «Սպորտուս» հենակետային քոլեջի տնօրենի հետ՝ հաշվի առնելով վերջինիս առաջարկները ևս:

Հարցումն անցկացվել է առցանց՝ ուսանողներին տրամադրելով հարցման հղումը:

Հարցաթերթը բաղկացած է 4 ներածական և 20 հիմնական հարցերից, որոնք ունեն 2 ենթահարցեր (տե՛ս Հավելված 1): 2–րդ հիմնական հարցի պատասխանները կարող են լինել մեկից ավելի:

2. Հարցման ընթացքը և գնահատումը

Յուրաքանչյուր դասավանդողի մասնագիտական և մանկավարժական որակների, ինչպես նաև վերջիններիցս ուսանողների բավարարվածության աստիճանի գնահատման նպատակով օգտագործվել է հետևյալ մոտեցումը.

1. 1–ին, 3–7–րդ, 9-16-րդ հարցերին տրված դրական պատասխանների դեպքում («Այո») յուրաքանչյուր գնահատվողի տրվել է 3 միավոր, իսկ բացասական պատասխանների համար («ոչ»)՝ 1 միավոր: «Երբեմն» կամ «Մասամբ» պատասխանների դեպքում տրվել է 2 միավոր, իսկ «ԴՊ»–ի դեպքում՝ 0 միավոր: Այսպիսով, գնահատականների միջինը հաշվարկելիս 3 միավորը համարվում է գերազանց, 2.4–ից մինչև 2.9–ը՝ լավ, 1.7–2.3–ը՝ բավարար, 0–ից 1.6–ը՝ անբավարար:
2. Քանի որ 2–րդ հարցի համար հնարավոր պատասխանների քանակը մեկից ավելի է, հավաքագրվել են դրա որակական պատասխանները:
3. 8–րդ (Դասախոսը կողմնակալ վերաբերմունք դրսևորո՞ւմ է ուսանողների նկատմամբ) և 18–րդ (Կցանկանայի՞ք, որ այս առարկան դասավանդեր մեկ այլ դասախոս) հարցերի համար դրական պատասխան է համարվում «Ոչ»–ը, որի համար տրվել է 3 միավոր, իսկ բացասական՝ «Այո»–ն, որի համար տրվել է 1 միավոր: «Մասամբ» պատասխանի դեպքում տրվել է 2 միավոր, իսկ «ԴՊ»–ի դեպքում՝ 0 միավոր:
4. 17-րդ հարցի («Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք տվյալ առարկայի դասախոսին 1-ից 10 բալանոց սանդղակով») պատասխանները, հաշվի առնելով վերջինիս կարևորության աստիճանը և միավորների միջակայքը (քանի որ այն ընդհանուր գնահատական է տալիս դասախոսին), ներկայացված են նույնությամբ:
5. Քանի որ երկու ենթահարցերը (13.1 և 19.1) պարտադիր չեն, նրանց համար միավոր չի տրվում, հաշվի է առնվում նրանց որակական պատասխանը:
6. 19–րդ հարցի (Կա՞ առարկա, որը կցանկանաք ավելացնել Ձեր հաջորդ տարվա առարկայացանկում) համար չի տրվել միավոր, քանի որ ուղղորդող բնույթ ունի իր ենթահարցի՝ 19.1–ի համար, որի դեպքում հավաքագրվել են որակական պատասխաններ:
7. Վերջին՝ 20–րդ հարցը, բաց հարց է և վերաբերում է ուսումնառողների առաջարկներին: Այս հարցի համար ևս հավաքագրվել են որակական պատասխաններ:

8. 3, 5, 6 Աղյուսակներում ներկայացված տոկոսների հանրագումարը գերազանցում է 100%-ը, քանի որ պատասխանողների կողմից ընտրվել են պատասխանների մեկից ավելի տարբերակներ:
9. Արդյունքում քանակական պատասխանների դեպքում հաշվարկվել է յուրաքանչյուր դասախոսին գնահատած ուսանողների պատասխանների միջին միավորը:

3. Հարցման արդյունքները

Հարցման ընթացքում հավաքագրված 490 հարցաթերթերի 70%-ը լրացրել են արական, իսկ 30%-ը՝ իգական սեռի ուսանողները (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1



«Զբոսաշրջություն» կրթական ծրագրից հարցմանը մասնակցել է ուսանողների 37%–ը, 35%-ը՝ «Բուժական մերսում» կրթական ծրագրից, «Ֆիզիկական կուլտուրա և



սպորտ» կրթական ծրագրերի ուսանողների 28%-ն է մասնակցել հարցումներին (տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ «Սպորտուս»–ի ուսանողության գերակշիռ մասը լավ կամ բավարար է գնահատում քոլեջում դասավանդող դասախոսների մասնագիտական ու մանկավարժական որակները: Ուսանողների գնահատմամբ՝ դասախոսները դասընթացը վարում են պարզ և ընկալելի ձևով, տրամադրում են անհրաժեշտ գրականություն, հարգալից վերաբերմունք են դրսևորում և ունեն մասնագիտական խորը գիտելիքներ առարկայի վերաբերյալ:

Հավաքագրված պատասխաններից նաև պարզ է դառնում, որ դասավանդողները համբերատար լսում են ուսանողների հարցերը և տալիս են սպառիչ պատասխաններ, իսկ առաջադրանքներն ու ստուգարքները գնահատվում են օբյեկտիվ:

Ընդհանուր առմամբ՝ համեմատաբար **ցածր է գնահատվել** դասախոսների՝ դասապրոցեսում ուսանողներին ներգրավելու կարողությունը և դասընթացի ժամանակ միջոցառումների կամ բաց դասերի կազմակերպման հաճախականությունը:

Այս համատեքստում միջինում բավարար է գնահատվել դասախոսների կողմից ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը:

Ըստ արդյունքների՝ ամենաբարձր («գերազանց»՝ 3 միավոր) գնահատականը «Ձեր առաջադրանքներն ու ստուգարքները օբյեկտի՞վ են գնահատվում» ստացել է **Անահիտ Բարսեղյանը**: Ամենացածր («անբավարար») գնահատականը «Դասավանդման ընթացքում կիրառվո՞ւմ են ժամանակակից տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, պրոյեկտոր և այլն» հարցի համար ստացել է **Մելինե Մանուկյանը**, իսկ «Դասախոս հնարավորություն տալի՞ս է դասընթացին առնչվող հարցերով իրեն դիմել նաև լսարանից դուրս» հարցի համար՝ **Մանյա Պողոսյանը**:

Հարցման անհատականացված արդյունքները՝ Աղյուսակ 2–ում:

Գերազան Լավ

Բավարար Անբավարար

Աղյուսակ 2

Հարց	**Սիրանուշ Սաֆարյան** (Հայոց լեզու և գրական.)	**Մելինե Մանուկյան** Հայոց լեզու և գրական.	**Արմենուհի Քոչարյան** (Հայոց պատմություն)	**Անանա Սիմոնյան** (Օտար լեզու	**Աշխեն Գրիգորյան** (Օտար լեզու	**Էլմիրա Լիլոյան** (Ռուսաց լեզու	**Անահիտ Բարսեղյան** (Ռուսաց լեզու	**Եռիա Յայլյան** (Հասարակագիտություն)	**Կարինե Կիրակոսյան** (Հանր. և եռհր.)	**Լուսինե Խաչատրյան** (Կենսաբանություն)	**Մելինե Հովհաննիսյան** (Կենսաբանություն)	**Կարինե Ղուլյան** (Քիմիա)	**Զեյրա Հովհաննիսյան** (Աշխարհագրություն)	**Լիդա Մեծոյան** (Ինֆորմատիկա)	**Մանյա Պողոսյան** (Ինֆորմատիկա)	**Հովսեփ Եսայան** (ԱՀՊ)
1. Դասախոսը դասընթացը վարո՞ւմ է Ձեզ համար պարզ և ընկալելի ձևով	2,5	2,7	2,9	2,6	2,5	2,6	2,9	2,8	2,5	2,5	2,9	2,6	2,6	2,4	2,3	2,4
3. Դասընթացի համար Ձեզ տրամադրվո՞ւմ է անհրաժեշտ գրականություն՝ գրքեր, նյութեր, էլեկտրոնային հարթակներ և այլն	2,2	2,2	2,4	2,7	2,5	2,4	2,8	2,5	2,3	2,7	2,5	2,7	2,1	2,4	2,4	2,4
4. Դասավանդման ընթացքում կիրառվո՞ւմ են ժամանակակից տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, պրոյեկտոր և այլն	1,7	1,5	1,8	2,4	2,0	1,9	2,3	2,0	1,7	1,9	2,4	2,1	1,7	2,7	2,3	1,9

5. Դասախոսը հետաքրքի՞ր անձնավորություն է, նրանից կարելի՞ է շատ բան սովորել	2,4	2,5	2,8	2,8	2,3	2,4	2,6	2,7	2,2	2,3	2,8	2,6	2,3	2,3	2,2	2,5
6. Դասախոսն ուսանողների նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորո՞ւմ է	2,3	2,5	2,9	2,9	2,3	2,6	2,8	2,7	2,6	2,4	2,8	2,7	2,1	2,5	2,2	2,5
7. Դասախոսը դասավանդո՞ւմ է սիրով ու ոգևորվածությամբ	2,3	2,6	2,8	2,9	2,1	2,6	2,9	2,7	2,3	2,3	2,8	2,6	2,4	2,0	2,3	2,5
9. Դասախոսը խրախուսո՞ւմ է ուսանողների ստեղծարար մտածելակերպը	2,2	2,1	2,8	2,4	2,4	2,4	2,6	2,6	2,1	2,3	2,3	2,6	2,2	2,0	2,4	2,3
10. Դասախոսը համբերատար լսո՞ւմ է ուսանողների հարցերը և տալի՞ս է սպառիչ պատասխաններ	2,3	2,5	2,9	2,7	2,3	2,5	2,9	2,8	2,4	2,5	2,8	2,8	2,4	2,5	2,2	2,6
11. Դասախոս հնարավորություն տալի՞ս է դասընթացին առնչվող հարցերով իրեն դիմել նաև լսարանից դուրս	2,2	2,0	2,7	2,6	2,2	2,5	2,7	2,6	2,2	2,3	2,4	2,6	2,3	1,9	1,6	2,4
12. Դասախոսը կազմակեպո՞ւմ է միջոցառումներ կամ բաց դասեր	1,7	1,4	2,0	2,7	2,1	1,9	2,2	2,0	1,5	2,1	2,7	1,6	1,7	1,2	1,5	1,6
13. Կարողանո՞ւմ է արդյոք դասախոսը ներգրավել Ձեզ դասապրոցեսի մեջ	2,1	2,4	2,5	2,6	1,8	2,3	2,6	2,6	2,0	2,3	2,6	2,3	2,1	1,8	1,9	2,3
14. Ձեր առաջադրանքներն ու ստուգարքները օբյեկտի՞վ են գնահատվում	2,4	2,3	2,8	2,6	2,4	2,6	3,0	2,8	2,4	2,4	2,5	2,4	2,4	2,4	2,5	2,4

15. Ստուգարքներին հատկացվող ժամանակը բավարա՞ր է առաջադրանքներն ամբողջությամբ կատարելու համար	2,5	2,3	2,7	2,4	2,4	2,5	2,5	2,6	2,3	2,3	2,3	2,3	2,5	2,3	2,4	2,3
16. Արդյո՞ք դասախոսն ունի մասնագիտական խորը գիտելիքներ առարկայի վերաբերյալ	2,7	2,7	2,8	2,7	2,6	2,8	2,9	2,8	2,3	2,4	2,8	2,7	2,6	2,7	2,6	2,6
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**2,3**	**2,3**	**2,6**	**2,6**	**2,3**	**2,4**	**2,7**	**2,6**	**2,2**	**2,3**	**2,6**	**2,5**	**2,2**	**2,2**	**2,2**	**2,3**

Ընդհանուր առմամբ՝ 14 հիմնական, փակ հարցերի պատասխանների համագումարով «Լավ» են գնահատվել Անահիտ Բարսեղյանը (2.7), Արմենուհի Քոչարյանը (2.6), Աննա Սինանյանը (2.6), Եղիա Յայլյանը (2.6), Մելինե Հովհաննիսյանը (2.6), Կարինե Ղուլյանը (2.5) և Էլմիրա Լիլոյանը (2.4):

Նույն հաշվարկով «Բավարար» են գնահատվել հետևյալ դասախոսները՝ Սիրանուշ Սաֆարյան (2.3), Մելինե Մանուկյան (2.3), Աշխեն Գրիգորյան (2.3), Լուսինե Խաչատրյան (2.3), Հովսեփ Եսայան (2.3), Զելդա Հովհաննիսյան (2.2), Լիդա Մեծոյան (2.2), Մանյա Պողոսյան (2.2), Կարինե Կիրակոսյան (2.2):

«Գերազանց» և «Անբավարար» գնահատականները բացակայում են:

Հարց 2. «Դասախոսը դասի ընթացքն ավելի հետաքրքիր դարձնելու համար ի՞նչ մեթոդներ է կիրառում»[1]

Աղյուսակ 3

Անուն, Ազգանուն	Դասավանդման մեթոդները						
	Ինքնուրույն աշխատանք	Մտագրոհ	Խմբային աշխատանք	Դեպքի ուսումնասիրություն	Դաս–շնորհանդես	Զանազան խաղեր	Քննարկում–բանավեճ
Սիրանուշ Սաֆարյան	25,6 %	4,7%	39,5%	2,3%	0%	7%	25,6%
Մելինե Մանուկյան	18,6%	4,7%	30,2%	20,9%	0%	2,3%	34,9%
Արմենուհի Քոչարյան	27,9%	0%	27,9%	27,9%	0%	11,6%	37,2%
Աննա Սինանյան	41,9%	16,1%	58,1%	12,9%	16,1%	45,2%	41,9%
Աշխեն Գրիգորյան	44,4%	0%	22,2%	11,1%	5,6%	0%	5,6%
Էլմիրա Լիլոյան	41,2%	2,9%	32,4%	23,5%	11,8%	2,9%	29,4%
Անահիտ Բարսեղյան	30,8%	0%	30,8%	7,7%	0%	7,7%	53,8%
Եղիա Յայլյան	39,1%	21,7%	37%	43,5%	17,4%	23,9%	54,3%
Կարինե Կիրակոսյան	51,2%	7,3%	9,8%	19,5%	4,9%	4,9%	12,2%
Լուսինե Խաչատրյան	37,5%	4,2%	45,8%	8,3%	4,2%	0%	12,5%
Մելինե Հովհաննիսյան	75%	8,3%	58,3%	25.0%	50%	58,3%	66,7%
Կարինե Ղուլյան	41,2%	5,9%	23,5%	23,5%	5,9%	5,9%	23,5%
Զելդա Հովհաննիսյան	39,4%	3%	24,2%	24,2%	6,1%	6,1%	27,3%
Լիդա Մեծոյան	83,3%	11,1%	5,6%	5,6%	5,6%	5,6	5.6%
Մանյա Պողոսյան	28,6%	0%	42,9%	0%	7,1%	14,3%	21,4%
Հովսեփ Եսայան	29,7%	10,8%	21,6%	35,1%	0%	8,1%	29,7%

[1] *Հարկ է նշել, որ ներկայացված տոկոսների հանրագումարը գերազանցում է 100%-ը, քանի որ պատասխանողների կողմից ընտրվել են մեկից ավելի պատասխանների տարբերակներ:*

Քոլեջում դասընթացն ավելի հետաքրքիր դարձնելու համար դասախոսները կիրառում են զանազան մեթոդներ (տե՛ս Աղյուսակ 3):

Հավաքագրված պատասխանների շնորհիվ պարզ է դառնում, որ դասավանդման նշված բոլոր մեթոդները կիրառում են մասնավորապես Աննա Սինանյանը, Էլմիրա Լիլոյանը, Եղիա Յայլյանը, Կարինե Կիրակոսյանը, Մելինե Հովհաննիսյանը, Կարինե Ղուլյանը, Ջելդա Հովհաննիսյանը, Լիդա Մեծոյանը:

Առաջարկված բոլոր մեթոդները համեմատաբար քիչ են կիրառում Արմենուհի Քոչարյանը, Աշխեն Գրիգորյան, Անահիտ Բարսեղյանը և Մանյա Պողոսյանը:

Ըստ այսմ պարզ է դառնում, որ դասախոսների մեծամասնությունը կիրառում է «Ինքնուրույն աշխատանք», «Խմբային աշխատանք» և «Քննարկում–բանավեճ» մեթոդները: Համեմատաբար քիչ են կիրառվում «Դեպքի ուսումնասիրություն», «Զանազան խաղեր» և սակավ կիրառելի են «Դաս–շնորհանդես» և «Մտագրոհ» մեթոդները (տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 3



Հարց 8. «Դասախոսը կողմնակալ վերաբերմունք դրսևորո՞ւմ է ուսանողների նկատմամբ»

Ուսանողների համար կրթության հավասար պայմաններ ստեղծելու կարևոր նախապայման է դասախոսների անկողմնական վերաբերմունքը: Նրանց կարծիքով ուսանողների գրեթե կեսի (50–75%) նկատմամբ անկողմնակալ վերաբերմունք են դրսևորում Մելինե Հովհաննիսյանը, Լիդա Մեծոյանը, Կարինե Կիրակոսյանը, Կարինե Ղուլյանը և Մանյա Պողոսյանը:

Հարցման մասնակիցների կարծիքով՝ 62%–ը կողմնակալ վերաբերմունք է վերագրում Անահիտ Բարսեղյանին (տե՛ս Աղյուսակ 4):

Սակայն հարկ է նշել, որ հնարավոր ենք համարում ուսանողների կողմից այս հարցի թերընկալումը, քանի որ նույն Անահիտ Բարսեղյանը պատասխանների ընդհանուր հաշվարկով ամենաբարձր միավորն է հավաքել (2.7):

Աղյուսակ 4

Անուն Ազգանուն	Այո	Մասամբ	Ոչ	ԴՊ
Սիրանուշ Սաֆարյան	33%	23%	42%	2%
Մելինե Մանուկյան	40%	16%	44%	-
Արմենուհի Քոչարյան	44%	14%	42%	-
Աննա Սինանյան	45%	10%	45%	-
Աշխեն Գրիգորյան	44%	33%	22%	-
Էլմիրա Լիլոյան	41%	18%	35%	6%
Անահիտ Բարսեղյան	62%	8%	31%	-
Եղիա Յայլյան	41%	13%	41%	4%
Կարինե Կիրակոսյան	34%	12%	51%	2%
Լուսինե Խաչատրյան	42%	25%	33%	-
Մելինե Հովհաննիսյան	17%	8%	75%	-
Կարինե Ղուլյան	32%	18%	50%	-
Զելդա Հովհաննիսյան	39%	39%	15%	6%
Լիդա Մեծոյան	11%	22%	61%	6%
Մանյա Պողոսյան	14%	36%	50%	-
Հովսեփ Եսայան	41%	8%	49%	3%

Ընդհանուր առմամբ քոլեջում դասախոսների վերաբերմունքի մասին կարծիքը գրեթե համաչափ է բաժանվում: Ուսանողների 43% կարծում է, որ դասախոսներն անկողմնակալ են, իսկ 38%–ը մտածում է հակառակը: 17%–ը կարծում է, որ կողմնակալ վերաբերմունք մասամբ առկա է, իսկ 2 տոկոսը դժվարանում է պատասխանել:

Գծապատկեր 4



Հարց 13.1 Կարողանո՞ւմ է արդյոք դասախոսը ներգրավել Ձեզ դասապրոցեսի մեջ: Եթե ԱՅՈ կամ ՄԱՍԱՄԲ, ապա ինչպե՞ս:

Գծապատկեր 5



Քոլեջի դասախոսների գերակշիռ մեծամասնությունը՝ 79%–ը (58%՝այո, 21%՝ մասամբ), կարողանում է ուսանողներին ներգրավել դասապրոցեսի մեջ (տե՛ս Գծապատկեր 5): Աղյուսակ 2–ում կարելի է նկատել, որ այս հարցի համար ամենաբարձր (2.6) գնահատականին են արժանացել **Աննա Սինանյանը, Անահիտ Բարսեղյանը, Եղիա Յայլյանը և Մելինե Հովհաննիսյանը:**

Դասապրոցեսում ուսանողներին ներգրավելու համար դասախոսներն օգտագործում են <u>հարցուպատասխանը, կիրառում են տարբեր վերլուծություններ և դասը վարում են հետաքրքիր ձևով</u> (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

	Պատասխաններ	Քանակ	%
1.	Հարց ու պատասխանի, հարցումների	45	97,8%
2.	Տարբեր վարժությունների (խաղեր ուսումնասիրություններ)	30	65.2%
3.	Պարզ ու հետաքրքիր է վարում դասը	15	32.6%
4.	Անձնական հետաքրքրությունից ելնելով	6	13%

Հարց 17. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք տվյալ առարկայի դասախոսին 1-ից 10 բալանոց սանդղակով

Բացի դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակների գնահատումը՝ ուսանողներ գնահատել են նրանց նաև 10 բալանոց սանդղակով (տե՛ս Գծապատկեր 6):

Ուսանողների կողմից ամենաբարձր գնահատականին (9.1) են արժանացել **Եղիա Յայլյանը** և **Մելինե Հովհաննիսյանը**: Նրանց, 8.9 գնահատականով, հաջորդում են **Արմենուհի Քոչարյանը** և **Աննա Սինանյանը**: Ամենացածր գնահատականն է ստացել **Լիդա Մեծոյանը**: Համեմատաբար ցածր են **Սիրանուշ Սաֆարյանի** և **Կարինե Կիրակոսյանի** գնահատականները:

Գծապատկեր 6



Հարց 18. Կցանկանայի՞ք, որ այս առարկան դասավանդեր մեկ այլ դասախոս

Ինչպես պարզ դարձավ հարցման արդյունքում, ուսանողների մեծամասնությանը գոհացնում են դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակները, ինչը հաստատվում է այն հանգամանքով, որ ուսանողները չեն ցանկանում փոխել իրենց դասավանդող դասախոսներին (տե՛ս Գծապատկեր 7):

Նրանք ցանկանում են ուսումնառությունը շարունակել հատկապես **Մանյա Պողոսյանի** (92.1%), **Մելինե Հովհաննիսյանի** (91.7%) և **Արմենուհի Քոչարյանի** (79.1%) հետ: Ի դեպ՝ այս

երկու դասախոսների հարցում գրեթե չկա բացասական պատասխան իսկ «ԴՊ» պատասխանը առհասարակ բացակայում է, ինչը վկայում ուսանողության շրջանում վերջիններիս վարկանշի մասին:

Ուսանողների 35%–ից ավելին կցանկանար, որ «Օտար լեզու» (44%, **Աշխեն Գրիգորյան**), «Կենսաբանություն» (42%, **Լուսինե Խաչատրյան**), «Աշխարհագրություն» (39%, **Զելդա Հովհաննիսյան**), Ռուսաց լեզու (39%, **Անահիտ Բարսեղյան**) և Քիմիա (38%, **Կարինե Ղուլյան**) առարկաները դասավանդեին այլ դասախոսներ:

Գծապատկեր 7



Հարց 19.1 Կա՞ առարկա, որը կցանկանաք ավելացնել Ձեր հաջորդ տարվա առարկայացանկում. Եթե ԱՅՈ, ապա ի՞նչ առարկա

Գծապատկեր 8



Քոլեջի ուսանողների մեծամասնությունը (63%) կարծում է, որ առարկայացանկում ոչ մի առարկա ավելացնելու կարիք չկա, սակայն հարցվածների 22%–ն ունի առաջարկներ այս հարցի վերաբերյալ (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

	Առաջարկվող առարկաներ	**Պատասխանների քանակ**[2]	**%**
1.	«Ֆիզկուլտուրա» (վոլեյբոլ, բասկետբոլ, բռնցքամարտ, մարտեր առանց կանոնների, թենիս ...)	30	65.2%
2.	Ռուսաց լեզու	3	6,5%
3.	Հասարակագիտություն	2	4,3%
4.	Կենսաքիմիա	2	4,3%
5.	Կենսաֆիզիկա	2	4,3%
6.	Նյութագիտություն	2	4,3%
7.	Կենսաբանություն	2	4,3%
8.	Հոգեբանություն	2	4,3%
9.	Հայոց լեզու և գրականություն	1	2,2%
10	Անգլերեն	1	2,2%

Թեև առարկայացանկում «Ֆիզկուլտուրա»–ն պարտադիր առարկա է, բայց և այնպես հարցման մասնակիցների 65%–ը նշել է, որ ցանկություն ունի իր ուսումնական պրոցեսում ավելացնել այդ առարկան՝ սեկցիոն պարապմունքների տեսքով:

Հարց 20. Ձեր կարծիքով՝ քոլեջում դասավանդումն ու կրթական գործընթացն ավելի լավը դարձնելու համար ի՞նչ է պետք անել

«Սպորտուս» հենակետային քոլեջի ուսանողների հիմնական մասը **ոչ մի առաջարկություն չունի** այս հարցի վերաբերյալ, իսկ մեծամասնությունը (49 պատասխան) քոլեջում դասավանդումն ու կրթական գործընթացման համար **ոչինչ չի ուզում փոխել**՝ նշելով, որ ամեն ինչ լավ է:

- ✓ Գերազանց է:
- ✓ Ամեն բան լավ է:
- ✓ Ոչինչ չէի փոխի:

Այնուհանդերձ, փոքրաթիվ առաջարկներից կարելի է առանձնացնել **սպորտային մրցույթներ կազմակերպելու** (5 պատասխան), **ֆիզկուլտուրայի ժամերը ավելացնելու** (3 պատասխան), **դասավանդման հետաքրքիր մեթոդներ կիրառելու** (3), ինչպես նաև

[2] *19.1 և 13.1 հարցերին հարցվողները տվել են մեկից ավել պատասխանների տարբերակներ:*

դասախոսական կազմն արհեստավարժ դասախոսներով համալրելու (3 պատասխան) մասին առաջարկները.

- ✓ սպորտային մրցույթներ կազմակերպել,
- ✓ ավելացնել սպորտին ուղղվածությամբ առարկաները,
- ✓ դասերը միատոն չանցկացնելու համար հետաքրքիր մեթոդներ կիրառել, խաղային հետաքրքիր միջոցներ ավելացնել,
- ✓ հարկավոր է ընդունել բարձր որակավորմամբ դասախոսներ:

Հարկ է նշել, որ քոլեջի **ուսանողներն ունեն գրքերի պակաս**, ինչի մասին վկայում են նրանց՝ դասագրքեր տրամադրելու մասին առաջարկները.

- ✓ Պետք է տրամադրել բավարար քանակով դասագրքեր:
- ✓ Լիներ բոլոր առարկաների գրքերը:

Ինչ վերաբերում է նյութատեխնիկական բազայի մասին առաջարկություններին, ապա ուսումնառողները ցանկություն են հայտնել բուհի տարածքում **ունենալ «փափուկ անկյուն»** և **համացանցի ամբողջական հասանելիություն**:

Եզրակացություններ

- ✓ «Սպորտուս» հենակետային քոլեջում դասավանդման և ուսուցման մեթոդաբանություն ուսումնասիրելու և ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանն ու կրթական միջավայր բարելավմանն աջակցելու համար ՈԱԲ–ի անցկացրած հարցման ընթացքում լրացվել է 490 հարցաթերթ, ինչի արդյունքում գնահատվել է քոլեջում դասավանդվող 14 դասընթացի 16 դասախոս:
- ✓ Ուսանողների շրջանում անցկացված սույն հարցման արդյունքում պարզվեց, որ դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակներն ուսանողների կողմից «Լավ» են գնահատվում՝ ստանալով հնարավոր 3 առավելագույն միավորից 2.3 միավոր:
- ✓ Ըստ ուսումնառողների՝ նրանք դասընթացը վարում են պարզ և ընկալելի ձևով (2.6 միավոր), սիրով ու ոգևորվածությամբ (2.5 միավոր), հարգալից վերաբերմունք են դրսևորում (2.5 միավոր) և ունեն մասնագիտական խորը գիտելիքներ առարկայի վերաբերյալ (2.5 միավոր):
- ✓ Համեմատաբար ցածր է գնահատվել (2 միավոր) դասավանդման ընթացքում դասախոսների կողմից ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը:
- ✓ Հավաքագրված պատասխանները փաստում են նաև, որ դասավանդողները համբերատար լսում են ուսանողների հարցերը և տալիս են սպառիչ պատասխաններ (2.5 միավոր): Ուսանողների կարծիքով նրանց առաջադրանքներն ու ստուգարքները օբյեկտիվ են գնահատվում (2.5 միավոր):

- ✓ Ուսանողներին համեմատաբար քիչ է գոհացնում դասապրոցեսում ուսանողներին ներգրավելու կարողությունը (2.2 միավոր) և դասընթացի ժամանակ միջոցառումների կամ բաց դասերի կազմակերպման հաճախականությունը (1.8 միավոր):
- ✓ Դասընթացը վարելիս դասախոսների մեծամասնությունը կիրառում է «Ինքնուրույն աշխատանք» (41%), «Խմբային աշխատանք» (31.9%) և «Քննարկում–բանավեճ» (30.1%) մեթոդները: Շատ քիչ են կիրառվում «Դաս–շնորհանդես» (8.4%) և «Մտագրոհ» (6.3%) մեթոդները:
- ✓ Քոլեջի ուսանողների 43%–ը կարծում է, որ դասախոսներն անկողմնակալ են, իսկ 38%–ը մտածում է հակառակը:
- ✓ Ինչ վերաբերում է դասապրոցեսում ուսանողներին ներգրավելու համար դասախոսներն օգտագործում են հարցուպատասխանի տարբերակը (97,8%), կիրառում են տարբեր վերլուծություններ (65.2%) և դասը վարում են հետաքրքիր ձևով (32.6%):
- ✓ «Սպորտուս» հենակետային քոլեջի ուսանողները իրենց դասախոսներին գնահատել են նաև 10 բալանոց համակարգով, ինչի արդյունքում վերջիններս ստացել են 5 միավորից բարձր գնահատականներ: Ամենաբարձր գնահատականը եղել է 9.1–ը (Եղիա Յայլյանը և Մելինե Հովհաննիսյան), իսկ ամենացածրը՝ 5.8 (Լիդա Մեծոյան):
- ✓ Քոլեջի ուսանողների որոշ մաս ցանկանում է, որ «Օտար լեզու» (44%, Աշխեն Գրիգորյան), «Կենսաբանություն» (42%, Լուսինե Խաչատրյան) և «Աշխարհագրություն» (39%, Զելդա Հովհաննիսյան) առարկաները դասավանդվեն այլ դասախոսների կողմից:
- ✓ Քոլեջի ուսանողների մեծամասնությունը (63%) կարծում է, որ առարկայացանկում ոչ մի առարկա ավելացնելու կարիք չկա, իսկ մի մասը (22%) հաջորդ ուսումնական տարում կցանկանար անցնել ֆիզկուլտուրայի սեկցիոն պարապմունքներ, օտար լեզուներ, հասարակագիտություն, հոգեբանություն, կենսաբանություն, կենսաքիմիա, կենսաֆիզիկա, նյութաբանություն և հայոց լեզու ու գրականություն:
- ✓ «Սպորտուս» հենակետային քոլեջի ուսանողների հիմնական մասը ոչ մի առաջարկություն չունի ուսումնական հաստատությունում դասավանդման և կրթության որակը բարելավելու համար, իսկ մեծամասնությունը (49 պատասխան) քոլեջում ոչինչ չի ուզում փոխել՝ նշելով, որ ամեն ինչ լավ է:
- ✓ Այնուհանդերձ, փոքրաթիվ առաջարկներից կարելի է առանձնացնել սպորտային մրցույթներ կազմակերպելու, ֆիզկուլտուրայի ժամերը ավելացնելու,

դասավանդման հետաքրքիր մեթոդներ կիրառելու, ինչպես նաև դասախոսական կազմն արհեստավարժ դասախոսներով համալրելու մասին առաջարկները:

Առաջարկություններ

- ✓ «Սպորտուս» հենակետային քոլեջում դասավանդման որակի մշտադիտարկում իրականացնելու և կրթական միջավայրի բարելավմանն աջակցելու համար ներդնել մեխանիզմներ՝ ապահովելու համար ՈԱԲ կողմից իրականացվող հարցումներին ուսանողության մասնակցայնությունը:
- ✓ Դասընթացն ավելի հետաքրքիր դարձնելու և ուսանողներին ներգրավելու համար կիրառել ժամանակակից տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, պրոյեկտոր և այլն, ինչպես նաև դասավանդումն իրականացնել տարաբնույթ մեթոդներով՝ չսահմանափակվելով ինքնուրույն աշխատանքով և խմբային աշխատանքով:
- ✓ Ստեղծել հարթակ (առկայության դեպքում զարգացնել այն) ուսանողների համար, որտեղ նրանք կարող են բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները, ինչպես օրինակ՝ կողմնակալ վերաբերմունք կամ մրցութային միջոցառումների սակավություն:
- ✓ Ուսանողներին տրամադրել լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ՝ աջակցելու ուսանողների ուսումնառության գործընթացի շարունակական բարելավմանը:

Հավելված 1

«ՍՊՈՐՏՈՒՍ» ՀԵՏԱԿԵՏԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

«ՍՊՈՐՏՈՒՍ» քոլեջի հարգելի ուսանողներ

Քոլեջում կրթական միջավայրի բարելավման և դասավանդման որակից Ձեր գոհունակությունը պարզելու նպատակով ՀՖԿՍՊԻ-ի Որակի ապահովման բաժինն իրականացնում է հարցում: ***Հարցումն անանուն է*** *և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:*

* Required

1. Գնահատվող առարկան՝ *

2. Գնահատվող դասախոսի անուն, ազգանունը՝ *

3. Նշեք Ձեր սեռը *

Mark only one oval.

- Արական
- Իգական

4. Նշեք Ձեր մասնագիտության կրթական ծրագիրը *

Mark only one oval.

- «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», որակավորումը՝ մարզիչ
- «Զբոսաշրջություն», որակավորումը՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման մասնագետ (զբոսավար)
- «Բուժական մերսում», որակավորումը՝ բուժքույր, բուժեղբայր, մերսող

5. 1. Դասախոսը դասընթացը վարո՞ւմ է Ձեզ համար պարզ և ընկալելի ձևով *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

6. 2. Դասախոսը դասի ընթացքն ավելի հետաքրքիր դարձնելու համար ի՞նչ մեթոդներ է կիրառում (կարող եք ընտրել մի քանի տարբերակ և/կամ նշել Ձեր տարբերակը «Other» հատվածում) *

Check all that apply.

- [ ] Ինքնուրույն աշխատանք
- [ ] Խմբային աշխատանք
- [ ] Դեպքի ուսումնասիրություն
- [ ] Քննարկում–բանավեճ
- [ ] Դաս–շնորհանդես
- [ ] Ձանազան խաղեր
- [ ] Մտագրոհ
- [ ] Other: _____

7. 3. Դասընթացի համար Ձեզ տրամադրվո՞ւմ է անհրաժեշտ գրականություն՝ գրքեր, նյութեր, էլեկտրոնային հարթակներ և այլն *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

8. 4. Դասավանդման ընթացքում կիրառվո՞ւմ են ժամանակակից տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, պրոյեկտոր և այլն *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

9. 5. Դասախոսը հետաքրքի՞ր անձնավորություն է, նրանից կարելի՞ է շատ բան սովորել *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

10. 6. Դասախոսն ուսանողների նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորո՞ւմ է *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

11. 7. Դասախոսը դասավանդո՞ւմ է սիրով ու ոգևորվածությամբ *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

12. 8. Դասախոսը կողմնակալ վերաբերմունք դրսևորո՞ւմ է ուսանողների նկատմամբ *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

13. 9. Դասախոսը խրախուսո՞ւմ է ուսանողների ստեղծարար մտածելակերպը *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

14. 10. Դասախոսը համբերատար լսո՞ւմ է ուսանողների հարցերը և տալի՞ս է սպառիչ պատասխաններ *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

15. 11. Դասախոս հնարավորություն տալի՞ս է դասընթացին առնչվող հարցերով իրեն դիմել նաև լսարանից դուրս *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

16. 12. Դասախոսը կազմարկեպո՞ւմ է միջոցառումներ կամ բաց դասեր *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

17. 13. Կարողանո՞ւմ է արդյոք դասախոսը ներգրավել Ձեզ դասապրոցեսի մեջ *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

18. 13.1 Եթե ԱՅՈ կամ ՄԱՍԱՄԲ, ապա ինչպե՞ս

_____

19. 14. Ձեր առաջադրանքներն ու ստուգարքները օբյեկտի՞վ են գնահատվում *

Mark only one oval.

- Այո
- Երբեմն
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

20. 15. Ստուգարքներին հատկացվող ժամանակը բավարա՞ր է առաջադրանքներն ամբողջությամբ կատարելու համար *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

21. 16. Արդյո՞ք դասախոսն ունի մասնագիտական խորը գիտելիքներ առարկայի վերաբերյալ *

Mark only one oval.

- Այո
- Մասամբ
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

22. 17. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք տվյալ առարկայի դասախոսին 1-ից 10 բալանոց սանդղակով *

Mark only one oval.

Շատ վատ

1

2

3

4

5

6

7

8

9

10

գերազանց

23. 18. Կցանկանայի՞ք, որ այս առարկան դասավանդեր մեկ այլ դասախոս *

Mark only one oval.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

24. 19. Կա՞ առարկա, որը կցանկանաք ավելացնել Ձեր հաջորդ տարվա առարկայացանկում *

Mark only one oval.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

25. 19.1. Եթե ԱՅՈ, ապա ի՞նչ առարկա

_____

26. 20. Ձեր կարծիքով՝ քոլեջում դասավանդումն ու կրթական գործընթացն ավելի լավը դարձնելու համար ի՞նչ է պետք անել

_____

This content is neither created nor endorsed by Google.

Google Forms